ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐ*[1]

ԴԷՏ ՆԻՆ ԵՒ ՎԿԱՅ ԼԻՆ
ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

«Կենդանի հոսք» կազմակերպութեան հրատարակած բազմաթիւ գրքեր (հայերէն լեզուով) գնալով սկսում են լայն տարածում գտնել մեզանում: Դրանք հիմնականում Վոչման Նիի եւ Վիթնէս Լիի ստեղծագործութիւններն են, քարոզները:

Բողոքական հարանուանութիւններից այս մէկը՝ «Կենդանի հոսքը», ծնունդ է առել Չինաստանում՝ դարասկզբին եւ յետոյ տեղափոխուել Ամերիկեան մայրցամաք (Անահայմ, Կալիֆորնիա), որտեղից էլ մինչեւ այսօր ղեկավարում է «Կենդանի հոսքը»:

Նրանց հայերէնով հրատարակած գրքերի ցանկն արդէն անցնում է տասնեակից. բոլորն էլ նոյն բովանդակութեամբ եւ նոյն կառուցուածքով, նոյնաբանութիւնների (տաւտալոգիա) առատութեամբ աչքի ընկնող: Նշանակութիւն չունի թէ, ինչ գիրք ես կարդում, եթէ այն Անահայմից է. ամենուր նոյն միտքը, ամէն էջում՝ նոյն գաղափարը, բառերի անկապ շարաններ, ամպագոռգոռ դարձուածքներ...

Աւելին, հայերէն հրատարակութիւններին բնորոշ է այն, որ չնայած հայերէն տառերով են գրուած, բայց հայերէն չեն. Բառերի կոյտ, ուր անհասկանալի է, թէ ինչ է ասելիքը: Միգուցէ դա թարգմանութեան հետեւանքն է, բայց անգամ դա բաւարար չէ հիմնաւորելու նման գրքերի հրատարակութիւնը: Մեր կարծիքով, ամենայն հաւանականութեամբ, «համացանցային» թարգմանութիւն է ներկայացուած, երբ թարգմանիչը հայերէն բառերն է թարգմանել, եւ ոչ բովանդակութիւնը:

Օրինակ. ստորեւ բերուած հատուածում Լիին նկարագրում է Տիեզերքը եւ մարդուն.

«Տիեզերքում երեք տարբեր աշխարհներ կան՝ ֆիզիկական, հոգեբանական եւ հոգեւոր. Եւ քանի որ մարդը բաղկացած է երեք տարբեր մասերից, նա ի վիճակի է շփուել այդ երեք տարբեր ոլորտների հետ: Ամենից առաջ կայ ֆիզիկական աշխարհ՝ բազմաթիւ նիւթական իրերով...»[2]: Այնուհետ նկարագրում է, թէ որն է ֆիզիկական աշխարհը, որն է հոգեբանականը եւ հոգեւորը:

---

* Սկիզբը «Էջմիածին», 2012, Ա.-ԺԲ., 2013, Ա.-Ժ.:

2 **Վ. Լի**, Մարդկային հոգին՝ Քրիստոսի փորձառության բանալին, Անահայմ, Կենդանի հոսք, 1997, էջ 8:

Նման կոսմոլօգիկ նկարագրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ infantilis: Նման պատկերացումներով կարծես ներկայացնում են տիեզերքը եւ մարդուն՝ որոշ խմբի մարդկանց, որոնք առաջին անգամ ծանօթանում են գիր-գրականութեանը, չունեն տարրական քրիստոնէական գիտելիքներ... Աւելի զարմանալի է այս «կրօնական» կազմակերպութեան անուանումը՝ «Աւետարանի քրիստոնեաների Երեւանի եկեղեցի (Վոչման Նիի Տեղական եկեղեցի)»[3]: Կարծես կան քրիստոնեաներ, որոնք Աւետարանին հաղորդ չեն:

Այս կազմակերպութեան հրատարակած գրքոյկների քարոզած աստուածաբանութիւնը համառօտ կարելի է ներկայացնել այսպէս.

- մարդը մեղաւոր է եւ ոչ մի բան չի կարող անել, նա մեռած է.
- մարդ պիտի ձգտի իմանալ իր կեանքի նպատակը.
- դրա համար պէտք է ամէն մարդկայինը իր միջից վերացնի.
- մարդը դառնում է մեքենայ՝ ռոբոտ.
- այս բոլորից յետոյ միայն նրա հետ կարող է գործել Սուրբ Հոգին՝ սովորեցնելով նրան ու ամէն բան տալով.

եւ վերջում, որն ամենակարեւորն է՝

«Եթէ դու ցանկանում ես աւելին սովորել Աստծու տնտեսութեան մասին եւ ստանալ Քրիստոսի փրկութեան աւելի խորը փորձառութիւն, կապ հաստատիր մեզ հետ յետագայ գրքոյցների համար»:

Եւ ապա՝

«Խնդրում ենք ձեր հասցէն գրել տպագիր տառերով»[4]:

Գործողութեան այս ձեւը շատ է տարածուած աշխարհում, եւ այդ ձեւով են լայն ցանցեր ստեղծում (մորմոնները, օրինակ, յայտնի են իրենց հսկայական արխիւներով, ուր տեղեկատուական նիւթեր են կուտակուած մարդկանց մասին, ինչ որ հնարաւոր է եղել՝ ձեռք են բերել բոլոր ազգերից, պետութիւններից, գրքերից, զանազան ընտանեկան յուշերից եւ այլն):

Ովքե՞ր են նրանք՝ «Կենդանի հոսքի» առաջնորդներ ու հիմնադիրներ Վոչման Նին եւ Վիթնես Լին[5]:

1920 թուականին Չինաստանում ծնունդ են առնում արեւմտեան քրիստոնէութեանը հակադրուող «տեղական» շարժումներ, որոնցից մէկի հիմնադիրն ու առաջնորդն է դառնում ոմն Նի Թոյ Շէն, որն իրեն վերանուանում է Վոչման Նի (Եզեկ. Գ.17-ի «դէտ»-ից): Նրա ծնողները մեթոդական եկեղեցու անդամներ էին: Նին կրթութիւնը ստացել է տարբեր միսիոներական դպրոցներում: Ի վերջոյ, Նին միանում է ոմն Վան Ցզայ անունով մի աւետարանչի, որը խրախուսում էր տներում աղօթաժողովներ անցկացնելու գաղափարը, առանց որեւէ կրօնական միաւորման պատկանելու կամ ընդգրկուելու: 1927 թուականին, բաժանուելով Վան Ցզայից, Նին հիմ-

3 ՀՀ-ում գրանցուած են 03.07.2003 թուականին, գրանցման թիւը՝ 9/5:

4 Մարդկային կեանքի խորհուրդը, Անահայմ, Կենդանի հոսք, 1997, էջ 25-28:

5 Անգլ. watchman=դէտ, պահակ, witness=վկայ:

նում է անկախ «Տնային ժողովների եկեղեցին»: Այս խմբավորումը ընդարձակելով՝ տարածում է Չինաստանով մէկ: Վոչման Նիին փոխարինում է նրա աշակերտ եւ համախոհ՝ Լի Չան Շոուն (յետագայում՝ Վիթնես Լի): Տնային ժողովների եկեղեցին, բոլոր աղանդների նման, ունի կուռ կազմակերպչական կառոյցներ. սկզբնական կազմակերպութիւնները ընտանիքներն են, որոնք պարտադիր կերպով հաւաքւում են շաբաթը երեք անգամ՝ տներում: Չորս ընտանիքը միանալով կազմում է խումբ:

1952 թուականին կոմունիստական վարչակարգը ձերբակալում է Նիին, Տայվանում դեղագործական գործարան բացելու եւ Չինաստանում քարոզչական գործունէութիւն ծաւալելու համար: Նին 20 տարի բանտում մնալով՝ վախճանւում է 1972 թուականին: Լին շարունակում է Նիի գործը, աւելի խստացնելով կազմակերպչական կանոնները ու կարգերը: Ինքնամեկուսացումը եւ մնացած բոլոր՝ թէ՛ հին, թէ՛ նոր (բողոքական) եկեղեցիները յայտարարւում են Ս. Գրքի հակառակորդներ եւ մերժւում են: Կաթոլիկներին նոյնացնում են Յայտնութեան Յեզաբէլի հետ, որը մոլորեցնում էր Աստծու ծառաներին (Յայտն. Բ. 20): Բողոքականներին Լին համեմատում է Սարդիկէի եկեղեցու հետ (Յայտն. Գ. 1-2): Որոշ մեղմութեամբ է Նին մօտենում բարենորոգիչներին (Լիութեր, Կալուին, Ցուինգլի եւ այլն), համարելով, որ նրանք որոշակի քայլեր են արել վերականգնելու ճշմարիտ եկեղեցին:

Նրանց գործունէութեան ձեւերն էլ նորութիւն չեն. սովորական մարդորսութիւն է, մանաւանդ՝ ուսանողական շրջաններում: Ընդ որում, մնացած աղանդների նման՝ սկզբում իրենց հիմնական վարդապետութեան մասին ոչինչ չեն քարոզում, այլ ընդհանուր, համաքրիստոնէական, համամարդկային գաղափարներով ու յաւիտենական խնդիրներին (կեանքի նպատակը, տիեզերքի ճակատագիրը եւ այլն) պարզունակ լուծումներ տալով՝ նոր ձեւաւորուող մարդկանց կամ թերուսերին ներգրաւում են ընտանեկան եկեղեցիների շրջանակներում: Ոչ մէկին եւ ոչ մի եկեղեցի չեն քննադատում, այսինքն, թաքցնում են իրենց ով կամ ինչ լինելը: Այդպիսով, կապելով նէոֆիտներին (յունարէն neophitos բառից, որ թարգմանւում է նորադարձ, նոր անդամ) իրենց եկեղեցու հետ, նրանք որոշ ժամանակ անց սկսում են բացել «խաղաքարտերը»:

Նրանց գործունէութեան ձեւերն են.

- կարդալ Ս. Գիրքը, թէկուզ առանց հասկանալու, քանի որ Աստծու խօսքը արդէն զօրութիւն ունի իր մէջ.

- անընդհատ ու միշտ կրկնելով՝ «Ալէլուիա», «Տէր Յիսուս Քրիստոս»՝ սրբանում են եւ վայելում են Աստծու ներկայութիւնը: Այս արարողութիւնը՝ մանտրաների արտաբերումների նման, առանց հասկանալու՝ էկզալտացիայի տանող ճանապարհն է[6]:

Լիի եկեղեցին առանձնանում է նաեւ «մանկութիւնը յիշելու» սկզբունքով. նա պնդում է, որ իրենք վերադառնում են առաքելական շրջանի եկեղեցիներին եւ այսօր աշխարհում այդպիսի մի եկեղեցի կայ՝ Լիի եկեղեցին:

Տնային ժողովների եկեղեցու աստվածաբանութիւնը մի խղճուկ խառնուրդ է

6 Տե՛ս **А. Д. Дворкин**, Введение в сектоведение, Н. Новгород, 2002, գլ. 12, նաեւ "Журнал Московской Патриархии", 11, 1996, էջ 46-51:

արեւելեան կրօնների եւ քրիստոնէութեան սկզբունքների: Արտաքուստ թւում է, թէ ամէն ինչ ճիշտ եւ սուրբգրային է, բայց իրականում այդպէս չէ: Լիի եկեղեցու աստուածաբանական հայեացքների մէջ աչքի է ընկնում «միաձուլման» վարդապետութիւնը, որը քրիստոնէական չէ, այլ աւելի արեւելեան կրօնների բնորոշ սկզբունք է: Աւելին, Երրորդաբանական պատկերացումները միապետական մոդալիզմի էկլեկտիկ վերընձիւղուած տարբերակն է: Այդ առումով Նի-Լի եկեղեցին միջին թուաբանականն է քրիստոնէական սկզբունքների եւ արեւելեան կրօնական որոշ սկզբունքների: Այդ է պատճառը որ Նի-Լի եկեղեցին մերժում է համարեա բոլոր բողոքական յարանուանութիւնների կողմից, անշուշտ, նաեւ Ուղղափառ եկեղեցիների կողմից: Յիսուսը Բելիարի հետ չի կարող համագործակցել: Աչքի ընկնող միւս սկզբունքը նրանց անտրոպոլոգիական պատկերացումն է մարդու մասին. մարդուն նրանք պատկերացնում են որպէս մի մեքենայ, որի վարորդը մեղքն է, սատանան: Փոխելով վարորդին՝ փոխւում է նաեւ մարդը, եւ ամէն հարց լուծւում է:

Եւ, վերջապէս, Լի-Նի կրօնում չկայ «հաւատ» հասկացութիւնը, ամէն ինչ տրամաբանօրէն յետեւում է եւ ամէն ինչ տրամաբանօրէն բացատրւում, ինքնակատարելագործման ճանապարհով ամէն մէկը արժանանում է աստուածային շնորհներին:

«Մարդկային կեանքի խորհուրդը» գրքոյկի բովանդակութիւնն այն է, որ մարդը չի կարող հասկանալ ոչ մի բան (էջ 5), քանի դեռ չգիտի Աստծու ծրագիրը, եւ միայն այդ գրքոյկը ընթերցելուց յետոյ մարդը կհասկանայ յաւիտենականութեան, կեանքի իմաստն ու նպատակը եւ այդ ամէնը ընդամէնը... 28 էջանոց փոքրիկ գրպանի գրքոյկում:

Մարդն անօթ է, եւ ըստ Լի-Նիի այդ երեք մասերից բաղկացած մարդու մէջ բնակւում է մեղքը, եւ այդ եռաշերտ մարդը ոչինչ անել չի կարող, քանի դեռ Ինքը՝ Քրիստոս չի եկել նրա մէջ, որպէսզի դուրս մղի մեղքը եւ ամբողջութեամբ գրաւի ու տիրի այդ եռաշերտ անհատի ամէն մի մասնիկ. «Աստուած սկզբում բաշխում է Իրեն մեր հոգու մէջ եւ, այնուհետեւ տարածւում է մեր հոգուց մեր շնչի մէջ: Ի վերջոյ, նա լցնում եւ յագեցնում է մեր հոգին, շունչը եւ մարմինը Իրենով»[7]: Եւ, որպէս վերջաբան, յայտարարւում է.

սա է մարդու կեանքի նպատակը.

սա է քրիստոնեա լինելու իմաստը.

սա է այն, ինչ Աստուած ծրագրել է քեզ համար[8]:

Իսկ այն հարցին, թէ՝ *«Այժմ ի՞նչ պիտի անեմ դու»,* պատասխանում է՝

«Կապ հաստատիր մեզ հետ» եւ չմոռանաս, որ *«մենք խնդրում ենք ձեր հաւցէն գրել տպագիր տառերով»*[9]:

Այս շօու-ծրագիրը սրանով չի աւարտւում: Հայերէն հրատարակած բազմաթիւ գրքերում աւելի մանրամասնօրէն է ներկայացւում այդ «ձուլման» վարդապետութիւ-

7 Մարդկային կեանքի խորհուրդը, էջ 21:
8 Անդ, էջ 22:
9 Անդ, էջ 27-28:

նը. Քրիստոս, Աստուած իջնում է մարդու մէջ եւ ձուլում նրա հետ, բոլոր հաւատացեալները, այդպիսով դառնում են աստուածամարդեր, եւ կեանքի նպատակը հէնց այդ է: Աշխարհը, տիեզերքը նոյն Քրիստոսն է: Ամէն ինչ Քրիստոսն է: Այս է «Բովանդակ Քրիստոս» գրքոյկի բոլոր թերթերի բովանդակութիւնը[10]: Տիեզերքը հնազանդ է Աստծուն, բայց մարդը՝ ոչ: Եւ Քրիստոսի փրկագործութիւնն էլ այն է, որ «միաձուլուի» մարդու հետ, խառնուի եւ մեզ դարձնի աստուածամարդ: Աստծու ծրագիրն է միաձուլուել եւ խառնուել մարդկանց մէջ (ոչ թէ՝ հետ) եւ ստեղծել աստուածամարդերի միութիւն, որը կոչւում է եկեղեցի: Այստեղ ոչ թէ միաւորման մասին է, այլ՝ միաձուլուելու, նոյնանալու եւ նոյնութիւն հաստատելու:

Այսպիսով, մարդը վերանալով՝ ձուլում է Արարչի, տիեզերքի հետ, ինքը դառնալով աստուածամարդ: Արարիչը՝ Աստուած այդ դէպքում դառնում է վերացական գաղափար միայն՝ Արարիչն էլ խառնուելով իր արարչութեան ամէն մի հիլէի հետ աստուածացնում է ամէն մի հիլէ... սա արդէն քրիստոնէութիւն չէ, կեղծ-քրիստոնէութիւն է:

«Քրիստոնեան Քրիստոս-մարդ է: Քրիստոնեան մի մարդ է, որ օրըստօրէ ուտում է Քրիստոսին, խմում է Քրիստոսին, մարսում է Քրիստոսին եւ Քրիստոսի հետ միախառնուում է: Որոշ ժամանակ անց, Քրիստոսն ինչ որ չափով դառնում է այս մարդը»[11]:

Նոյն բանն է Լին քարոզում նաեւ «Կեանքի փորձառութիւն» գրքոյկում[12].

«Քանի որ Աստծոյ կամքը Նրա արտի ցանկութիւնն է, մենք պէտք է սովորենք, թէ ինչ է նրա ցանկութիւնը: Այն Աստծոյ խառնուելն է մարդուն: Մարդու հետ խառնուելը եւ՛ Աստծու փափագն է, եւ՛ Նրա կամքը»[13]:

Այսպիսով, Լի-Նի եկեղեցու դաւանանքի հիմնական սկզբունքները ոչ մի կապ չունեն Ս. Գրքի հետ, պարզապէս հեթանոսական են եւ հակառակ Ս. Գրքին:

Եկեղեցու պատմութեանը յայտնի են եղել այս կարգի աղանդներ դեռ Գ. դարից, երբ Մանի անունով մէկը, փորձեց միաւորել Պարսից կրօնը քրիստոնէութեան հետ եւ առաջացաւ մանիքէութիւնը, որն էլ ժամանակին մերժուեց եւ վերացաւ պատմութեան ասպարէզից:

Լի-Նի եկեղեցին, փաստօրէն, նոր մանիքէութեան դրսեւորում է, երբ արտաքին կողմը քրիստոնէական է ներկայանում, իսկ նպատակը՝ պտուղը կամ արդիւնքը՝ հեթանոսական:

(Շարունակելի)

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՅԻԼԵԱՆ

10 Վ. Լի, Բովանդակ Քրիստոս, Անահայմ, Կենդանի հոսք, 1997:
11 Անդ, էջ 196:
12 Տե՛ս Վ. Լի, Կեանքի փորձառութիւն, Անահայմ, Կենդանի հոսք, 1997, էջ 8:
13 Անդ, էջ 166: